դնում յօդուտ իմ առաջնորդած զօրքերի», գրում էր 15 Նոյեմբերի 1796 ամի Իմսկիյ-Կորսակով զօրավարը Յովսէփ արքեպիսկոպոսին, «և շատ ցաւում եմ, որ այս տղմուտ ու ցեխոտ ճանապարհները յոգնեցնում են Ձեզ»։ «Վիայոյս եմ», գրում էր նա Նոյեմբերի 12-ին, «որ արդէն Ձերդ սրբազնութեան հուշակը հայ գիւղերում և նոյն իսկ խանի մօտ ինձ մեծապէս օգտակար կըլինի այս գործի մէջ (պարէնի հայթայթման), և ես ընդ միշտ երախտապարտ և անձնուէր կը մնամ առ Ձեզ»։ Վ. Ա. Զուբով կոմսն էլ իւր կողմից սրբազանին անկեղծ շնորհակալութիւն յայտնելով, խնդրում էր նրան (նամակ 2 դեկտեմբերի 1796 ամի, համար 506)՝ «չարունակել ընդհանուրի օգտին նուիրած փոյթեռանդն ջանքերը»։

Ղուկաս կաթողիկոսն՝ առանց խզելու բարեկամական յարաբերութիւնները խաների հետ, ռուսաց զօրքերի Գանձակ մտնելուց յետոյ հազիւ կարողանում էր ծածկել իւր ուրախութիւնը սպասելով նրանց մօտենալուն Էջմիածնին. սակայն յանկարծ «աշխարհիս ամենաօգտակար գործը», ինչպէս որ նա գրում էր Շամիր խանին, ընդհատուեցաւ բօթաբեր լրով, թէ Եկատերինէ Բ. վախճանուած է և ռուսաց զօրքերը յետ են կանչուում Պարսկաստանից... Շատ ծանր վիշտ պատճառեց սրբազնագոյն Ղուկասին և Վրաստանի ասպատակուիլն Աղա Մահմէդ խանի կողմից։

Կայսրուհու վախճանման օրից շատ չանցած, և յատկապէս 1799 թ. աշնան, Ղուկաս հայրապետը հիւանդացաւ և բաւական ժամանակ տառապելով՝ նոյն թուականի դեկտեմբերի 28-ին հոգին աւանդեց։

Երջանկայիշատակ Ղուկաս կաթողիկոսի գործունէութիւնը և անձնաւորութիւնը գնահատելիս չենք կարող անտես առնել նորան պատիւ բերող այն հանգամանքը, որ նա սին փառասիրութեան անմատչելի մնաց և վեհութեամբ կատարում էր իւր բարոյական պարտականութիւնքն Ազգի և Եկեղեցւոյ առջև, այն պարտականութիւնները, որ դնում էր նորա վրայ իւր բարձր կոչումը։ Նա չենթարկուեց ընդհանուր հոսանքին, այլ իւր լուրջ հայեացքով, հեռատեսութեամբ և զգուշաւոր ընթացքով՝ փրկեց, ինչպէս որ տեսանք, հայրապետական աթոռն և հայոց ազգը մահմեդական կառավարութեան անգութ վրէժից, որ անշուշտ նրա անզգաստութեան կը յաջորդէր, եթէ նա իւր օտի ազգեցիկ անդամներից շատերի ատիպողական հրաւէրնե-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան